ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 դեկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

173
(3023)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆՆ ԻՐ ՎԱՐՈՐԴԻՆ ՕԳՆԱԿԱՆ-ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Է ԴԱՐՁՐԵԼ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը պետական ու սեփական միջոցները խառնել է իրար. նա իր խորհրդական-օգնականին կնոջ հետ ԱՄՆ է ուղարկել:

ՀՀ ԱԺ թերեւս ամենասկանդալային նախագահ Ալեն Սիմոնյանի կնոջը՝ Մարիամ Մարգարյանին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուղեկցում է Ալեն Սիմոնյանի «խորհրդատու-օգնական» ձեւակերպված Համլետ Գեւորգյանը:

Մարիամ Մարգարյանը ԱՄՆ-ից լուսանկարներ էր հրապարակել սոցցանցի իր էջում, որտեղ ԱԺ նախագահի խորհրդական-օգնական Համլետ Գեւորգյանի, երգիչ Էրիկ Կարապետյանի եւ նրա կնոջ՝ Սվետլանա Իշխանյանի հետ է:

Գաղտնիք չէ, որ Մարիամ Մարգարյանը եւ Էրիկ Կարապետյանը համագործակցում են: Կարապետյանի երեւանյան վերջին համերգը կազմակերպել էր Մարիամ Մարգարյանի «ԷՖԷՄԷՖ գրուպ» ընկերությունը, որը հիմնադրվել է 2019 թվականին:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պաշտոնապես տեղեկանալ, թե ինչպես է ԱԺ նախագահի՝ պետական բյուջեից աշխատավարձ ստացող խորհրդական-օգնականը, աշխատանքի գալու փոխարեն, ԱՄՆ մեկնել եւ ինչու ԱԺ կայքում նրա գործուղման մասին ոչինչ չկա նշված:

«Համլետ Գեւորգյանը գտնվում է արձակուրդում: ԱՄՆ մեկնել է իր հաշվին, իր միջոցներով, հենց այս պատճառով ԱԺ կայքում ոչինչ չկա այդ մասին»,- պարզաբանեց ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Մովսես Հարությունյանը:

Հավելենք, որ դատելով լուսանկարներից՝Ալեն Սիմոնյանի օգնական-խորհրդականը, որը պետբյուջեից բավականին բարձր աշխատավարձ է ստանում, ԱԺ նախագահին օգնելու եւ խորհուրդներ տալու համար փաստացի ծառայություններ է մատուցում նրա տիկնոջը: Ի դեպ, Համլետը, մինչեւ այդ պաշտոնը զբաղեցնելը, Ալեն Սիմոնյանի վարորդն էր (լուսանկարը 2019 թվականին է արված):

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում խմորումները շարունակվում են, եւ 15 հոգանոց վարչության նիստերից արտահոսքերը շարունակվում են անգամ Հովիկ Աղազարյանի անփառունակ հեռացումից հետո: «Ժողովուրդ» օրաթերթին որոշ ՔՊ-ականներ շարունակում են մանրամասներ ներկայացնել ՔՊ ներքին գզվռտոցներից: Այսպիսով՝ հոկտեմբերի 31-ի նախաձեռնող նիստը, որը Նիկոլ Փաշինյանն անվանեց «ինքնաքննադատության օր», խոր արմատներ ունի: Պարզվում է, որ վերջերս՝նախաձեռնող նիստերից մեկի ժամանակ, իշխանականները փորձել են սեւացնել մեկը մյուսին ու իրար մասին բացահայտումներ անել Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արփի Դավոյանը, երկրորդելով Անդրանիկ Քոչարյանին, հայտարարել է, որ թիմը թաթախված է կոռուպցիայի մեջ, որ նախկիններից ավելի վատ բարքեր են հաստատվել ՔՊ-ում: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանը պահանջել է անուններ հնչեցնել, փաստերով խոսել: ՔՊ-ական տիկնանց օգնության է եկել Անդրանիկ Քոչարյանը ու անուններ տվել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Բազմաթիվ անգամներ «Ժողովուրդ» օրաթերթը անդրադարձել է, որ ՀՀ Կառավարությունը չի կարողանում կարգուկանոն հաստատել ծխախոտի շուկայում, ու Հայաստանում մեծ մասշտաբների մաքսանենգ ապրանքներ կան: Հատկապես ՊԵԿ-ի վերջին փոփոխություններից հետո տեղեկություններ ենք ստանում, որ ակտիվացել են հարեւան Վրաստանից, ավելի կոնկրետ՝գործող երեք մաքսակետերի Duty Free-ներից ծխախոտ գնելու դեպքերը: Ծխախոտը ֆիզիկական անձանց միջոցով, փոքր խմբաքանակներով անցկացվում է Հայաստան, ապա Telegram ալիքներով, սոցցանցերով ու list.am-ով կազմակերպվում է դրանց վաճառքը: Տպավորություն է, որ այս գործընթացը ոչ թե քաոտիկ կերպով է կատարվում, այլ գործ ունենք կազմակերպված խմբավորման հետ, որի թելերը տանում են հայ խոշոր գործարարներից մեկի շրջապատ, ում անունը դեռեւս չենք հայտնում, քանզի ակտիվ աշխատանքներ են տարվում այդ մասով: Ծխախոտ արտադրող ընկերություններից մեկի աշխատակիցը մեզ հետ զրույցում դժգոհեց, որ պետության ներսում ստեղծում են աշխատատեղ, տալիս են հարկ, որը մեկ տուփի դեպքում միջինը 250-300 դրամ է, եւ տեսնում են, թե ինչպես է զարտուղի ճանապարհով կազմակերպվում ծխախոտի ներմուծում եւ վաճառք, որը հաճախ ավելի էժան է ստացվում, քան տեղական արտադրողի մուծած հարկը: Իսկ պետությունը կամ չի ուզում պայքարել, կամ չի կարողանում դադարեցնել այս ապօրինությունը: Հետաքրքիր է՝ ՊԵԿ նոր նախագահ Էդուարդ Հակոբյանը կկարողանա՞ արդյունք ցույց տալ, թե՞ կբավարարվի մեկ-երկու կոսմետիկ քայլերով: Հ.Գ. Բնական է, որ սոցիալական ծանր պայմաններում ապրող մարդու համար նախընտրելի է էժան ապրանքի ձեռքբերումը, սակայն հարկ վճարողին «աստվածացնելու» քարոզչություն իրականացնող պետությունը նույնիսկ մատը մատին չի տալիս հարկատու արտադրողին անհանգստացնող խնդրին համապարփակ լուծում տալու համար:



Երեւանի գլխավոր տոնածառի լույսերի վառման արարողությունը արժեցավ 90 մլն դրամ, իսկ Ազգային ժողովի համար Ամանորին նվիրված միջոցառումը, որը կրում էր «Ամանորը Ազգային ժողովում» խորագիրը, ծառայություններով հանդերձ արժեցել է 9 մլն դրամ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ պաշտոնական աղբյուրներից: Պետական բյուջեից հատկացվել է 9 մլն 333 հազար դրամ: «ՀՀ Ազգային ժողովի այգու ամանորյա ձեւավորումը եւ տոնական համերգային ծրագրի կազմակերպումն իրականացնել 2024 թ. դեկտեմբերի 25-ին, այդ թվում՝ ԱԺ կենտրոնական դարպասների ձեւավորում՝ Ռ-աձեւ (Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ) եղեւնու բնական ճյուղերով, խաղալիքներով եւ դարպասների լուսավորումով: Կենտրոնական դարպասների դիմացի հատվածում տեղադրել դեկորատիվ կամար եւ տոնական լուսավորությամբ ձեւավորել, տեղադրել ձնեմարդ 2 արձան՝ առնվազն 2.5 մետր բարձրությամբ (տեսքը, ձեւը եւ այլն Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ), եղեւնու բնական ճյուղերով:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը խաղաղագետ Հայկ Մարտիրոսյանի հետ զրուցել է Սիրիայում կատարվող վերջին զարգացումներից, հայկական կողմի անելիքներից:

-Պարոն Մարտիրոսյան, կարծես աշխարհաքաղաքական նոր փոփոխություններ են ընթանում, նոր բաժանումներ են լինում, եւ հատկապես բուռն զարգացումներ են տեղի ունենում Մերձավոր Արեւելքում: Ընդամենը մի քանի օր առաջ՝ դեկտեմբերի 8-ին, հայտնի դարձավ, որ Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսը հայտնվել է զինյալ խմբավորումների վերահսկողության տակ: Այս իրադարձությունները ինչպե՞ս կարող են անդրադառնալ մեր տարածաշրջանի եւ, հատկապես, Հայաստանի վրա՝ հաշվի առնելով, որ այս ամենի անմիջական մասնակիցը հարեւան Թուրքիան է:

-Այս զարգացումները մեզ վրա շատ վատ անդրադարձ են ունենալու: Նման իրադարձությունների պարագայում գոյություն ունի Դոմինոյի էֆֆեկտ, որի դեպքում, եթե նախաձեռնող կողմը կապ ունի Դոմինոյի մեկ այլ, թեկուզ այդ պահին հեռավոր թվացող օղակի հետ, ապա էֆֆեկտն անպայմանորեն հասնում է նաեւ այդ օղակին: Այսինքն, եթե այլ պարագայում կարող է փլուզման գործընթացը ինչ որ պահի կանգ առնել, ապա այս դեպքում այն անպայման կհասնի վերոնշյալ օղակին: Սա հենց այդ պարագան է, քանի որ, ինչպես արդեն նշեցիք, Թուրքիան է կանգնած այս հեղաշրջում-հեղափոխության ետեւում, իսկ սա հենց ռազմական զինված հեղափոխություն է, որովհետեւ համակարգ է փոխվում Սիրիայում, եւ ո՛չ ոք չի խոսում այդ մասին: Այս հեղաշրջման հետեւում կանգնած է Թուրքիան եւ հաջորդիվ նաեւ այլ քայլեր է անելու՝ թե՛ տարածաշրջանում, թե՛ հատկապես Հարավային Կովկասում:

Թուրքական դիվանագիտությունը հերթական անգամ ցույց տվեց իր բարձր որակը, աշխատանքի հետեւողականության հարցում ունեցած կամքի արդյունքում հաջողության հասնելու բացառիկ տաղանդը, որը դարերի ընթացքում բազմիցս դրսեւորվել է:

Սիրիայում տեղի է ունեցել իսլամիստական հեղափոխություն, որտեղ աշխարհիկ եւ հանդուրժող (քրիստոնյաներին շատ մոտ իսլամական կրոնական ճյուղի, որին Իսլամի տարբեր ճյուղեր կրոնի մաս էլ չեն համարում) ալաուիների իշխանությունը, ի դեմս Ասադի ընտանիքի, փլուզված է: Ի դեպ, Սիրիան համայնքային պետություն էր, բայց հենց Ասադների, ու հատկապես Բաշար ալ Ասադի հոր՝ Հաֆեզ Ասադի ջանքերով, բռնությամբ եւ ճնշումներով ստեղծել էր մի իրավիճակ, որ էթնոդավանաբանական տարբերությունները տաբու էին քննարկման համար: Այս իրավիճակը սկսեց փլուզվել պատերազմի սկզբում. իրավիճակը շատ խոր պատմություն ունի եւ պարզապես Ասադի բռնատիրության դեմ ապստամբություն չէր, սա պարզ է: Պատմության ընթացքում մի քանի անգամ սուննի մեծամասնության ծայրահեղականության կողմից տեղի են ունեցել ալաուիների ցեղասպանություններ եւ սուննիները, որոնք մեծամասնություն են ոչ միայն Սիրիայում, այլ նաեւ Մերձավոր Արեւելքում, առհասարակ եւ աշխարհում, իրենց ծայրահեղական հատվածի շրջանում չէին կարողանում հանդուրժել փոքրամասնություն հանդիսացող ալաուիների իշխանությունը: Խնդիրը հենց սրա մեջ էր: Ասադը, այո՛, բռնակալ էր, իր հայրը նույնպես բռնակալ էր, սակայն սրանք այն բռնակալներն են՝ առանց որոնց երկիրը ընկնում է քաոսի մեջ եւ վերածվում մի տարածքի, որտեղ անհանդուրժողականության մակարդակը սարսափելի բարձր է: Ինչ վերաբերում է ռեժիմին, ապա այն անհանդուրժող էր միայն կրոնական ծայրահեղականության նկատմամբ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ազատվելուց հետո Թագուհի Թովմասյանը երեկ իր սոցցանցի էջում գրել է.

«1948 թվականի դեկտեմբերի 10-ին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: 1950 թվականին Գլխավոր ասամբլեայի առաջարկով տարբեր պետություններ եւ կազմակերպություններ, իսկ այսօր նաեւ ամբողջ աշխարհը, դեկտեմբերի 10-ը նշում է որպես Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր:

Եվ հատկապես այսօր՝ Մարդու իրավունքների պաշտպանության օրը, կարեւոր է հիշեցնել, որ մարդու իրավունքների պաշտպանությունը ոչ միայն իրավական դաշտի, այլեւ քաղաքական եւ բարոյական պարտավորություն է:

Հետհեղափոխական Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացման խոստումներին հակառակ՝ կոպտագույնս ոտնահարվում են դրանք:

1. Տարբեր մասնագետներ ահազանգում են, որ դատական համակարգը իշխանությունների կողմից ճնշումների եւ քաղաքական միջամտությունների է ենթարկվում, ինչը հաստատվեց նաեւ ՍՄՍ-ների միջոցով ազատումների շքերթով: Չնայած որոշ բարեփոխումներին՝ դատավորների որոշումների վրա ազդեցություն գործելու դեպքերը մնում են մտահոգիչ: Դատական անկախությունը հենասյուն է մարդու իրավունքների պաշտպանության համար, որը խախուտ է:

2. Հայաստանում լրագրողները եւ լրատվամիջոցները շարունակում են ճնշումների ենթարկվել. ծեծ, բռնություն, հավատարմագրումից զրկում, վիրավորանքներ... Խոսքի ազատությունը լրջագույնս վտանգված է: ԱԺ նախագահի 25-ից ավելի հայցերն ապացուցում են, որ բարձրագույն իշխանությունը չի հանդուրժում ազատ խոսքը:

3. Պատգամավորի անձնական տվյալների եւ, մասնավորապես, նրա հեռախոսազանգերի կամ հաղորդագրությունների շրջանառությունը իշխող խմբակցության մեջ լրջագույնս խախտում է անձնական կյանքի իրավունքը: Ծայրահեղ անընդունելի է Հովիկ Աղազարյանի հետ կատարվողը:

4. ...Կարող եք ցանկը շարունակել ինքներդ, որը, վստահ եմ, շատ երկար է ...»:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ

Ադրբեջանի փոխարտգործնախարար Էլնուր Մամեդովը կարծում է, որ Հայաստանի հետ հնարավոր է համաձայնության գալ:

Այս մասին նա ասել է «Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության համաձայնագրի հիմնական խոչընդոտները» թեմայով միջազգային համաժողովում:

Միաժամանակ Մամեդովը նշել է, որ Հայաստանի Սահմանադրությունն է դժվարություններ ստեղծում խաղաղ գործընթացն առաջ մղելու համար:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, դեկտեմբերի 9-ի հրամանագրով, Արսեն Առաքելյանին նշանակել է Քուվեյթի Պետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Էլ Քուվեյթ):

Ինչպես տեղեկացանք ՀՀ նախագահի կայքից, նշանակումը կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի առաջարկությունը եւ համաձայն Սահմանադրության 132-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաեւ «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 14-րդ հոդվածի:

ՀՀ նախագահի մեկ այլ հրամանագրով՝ Սարմեն Բաղդասարյանը հետ է կանչվել Քուվեյթի Պետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

ՔՊ–ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՊԱՇՏՈՆ ԿՍՏԱՆԱ

ՔՊ-ական Նարեկ Զեյնալյանի հեռանալուց հետո ԱԺ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը բաժին կհասնի ՔՊ խմբակցության պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին:

ՔՊ խմբակցությունը արդեն առաջադրել է Թորոսյանին այդ պաշտոնում, իսկ հերթական նիստի ժամանակ քվեարկությամբ կընտրի նրան:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արսեն Թորոսյանի այս պաշտոնը շատ է փոթորկել ու անհանգստացրել հատկապես առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին:

Գաղտնիք չէ, որ առողջապահության գործող եւ նախկին նախարարներ Անահիտ Ավանեսյանի եւ Արսեն Թորոսյանի հարաբերությունները շատ լարված են, ինչը չի թաքցրել հատկապես Թորոսյանը՝ ԱԺ նիստերի ընթացքում հրապարակավ քննադատելով Ավանեսյանին եւ դժգոհելով նրանից: Արսեն Թորոսյանն անգամ Նիկոլ Փաշինյանին է փորձել համոզել, որ պաշտոնանկ անի Ավանեսյանին եւ իր մարդուն նշանակի առողջապահության նախարար:

Բանն այն է, որ ցանկացած նախագիծ, որը հեղինակում է նախարարությունը, հաստատվելու համար պետք է անցնի ԱԺ գլխադասային հանձնաժողով: Այսինքն՝ առողջապահության նախարարության հեղինակած նախագծերը պետք է անցնեն Արսեն Թորոսյանի «թրի տակով», ինչը լուրջ խնդիրներ է առաջացնելու Անահիտ Ավանեսյանի համար:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔՈՐՔԵՐ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին գաղափար է առաջարկել, որ Ուկրաինայում տեղակայվեն օտարերկրյա զորքեր, քանի դեռ երկիրը չի միացել ՆԱՏՕ-ի ռազմական դաշինքին: Reuters-ը հաղորդում է, որ Զելենսկին այս մասին հայտարարել է Կիեւում Գերմանիայի ընդդիմության առաջնորդ Ֆրիդրիխ Մերցի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ:

Ուկրաինան, որը փորձում է ՆԱՏՕ-ին միանալու հրավեր ստանալ, ռուս-ուկրաինական հակամարտության ողջ ընթացքում պնդել է, որ իրեն անվտանգության երաշխիքներ են անհրաժեշտ՝ կանխելու Ռուսաստանի կողմից հերթական հարձակումը ներկայիս ռազմական գործողությունների դադարեցումից հետո:

«Այս կամ այն երկրի զորակազմը կարող է ներկա գտնվել Ուկրաինայում այնքան ժամանակ, քանի դեռ այն ՆԱՏՕ-ի մաս չէ: Բայց դրա համար մենք պետք է հստակ պատկերացում ունենանք, թե երբ է Ուկրաինան դառնում ԵՄ անդամ եւ երբ է դառնում ՆԱՏՕ-ի անդամ», - ասել է Զելենսկին:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը փետրվարին չէր բացառել, որ եվրոպական երկրները կարող են զորքեր ուղարկել Ուկրաինա, սակայն Մակրոնի այս հայտարարությունը բուռն հակասություններ էր առաջացրել:

Վոլոդիմիր Զելենսկին նաեւ հայտնել է, որ մտադիր է առաջիկա օրերին զանգահարել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենին եւ քննարկել նրա հետ ՆԱՏՕ-ին միանալու հրավեր ստանալու հարցը:

Ռուսաստանն իր հերթին պահանջում է, որ Ուկրաինան հրաժարվի Հյուսիսատլանտյան դաշինքին միանալու գաղափարից, քանի որ դա համարում է իր անվտանգության համար լուրջ սպառնալիք:

ՍԻՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԱԼ

Սիրիայի նախագահ Բաշար Ասադին ենթակա Սիրիայի կառավարությունը պատրաստ է անհրաժեշտության դեպքում հրաժարական տալ:

Այս մասին Al Arabiya հեռուստաալիքին հայտնել է երկրի վարչապետ Մուհամեդ Ալ-Ջալալին:

Նրա խոսքով՝ իշխանության եկած զինված ընդդիմության հետ բանակցությունները շարունակվում են: «Մենք պատրաստ ենք փոխանցել մեր լիազորությունները հենց որ մեզ դա խնդրեն»,- ասել է նա:

Սիրիայի հակակառավարական ուժերը դեկտեմբերի 8-ին, առանց դիմադրության հանդիպելու, գրավել են Դամասկոսը: ՌԴ արտգործնախարարությունը հայտնել է, որ Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը սիրիական հակամարտության մի շարք մասնակիցների հետ բանակցություններից հետո որոշել է հրաժարական տալ եւ լքել Սիրիան՝ հրահանգելով խաղաղ ճանապարհով փոխանցել իշխանությունը:

ԱՄԱՆՈՐՅԱ ԵՌՈՒՔԵՌ՝ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

ՈՐՔԱՆ ԳՈՒՄԱՐ Է ՀԱՏԿԱՑՎԵԼ, ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

Երեւանի քաղաքապետարանը ամանորյա եռուզեռի եւ նախապատրաստական աշխատանքների մեջ է: Տարբեր վարչական շրջաններ արդեն իսկ պատրաստվում են ամանորյա տոնական միջոցառումներին՝ դրանց հետ մեկտեղ ապահովելով տարբերվող եւ յուրօրինակ զարդարանքներ:

Հենց նման նախաձեռնության շրջանակում էլ Արաբկիր վարչական շրջանի ամանորյա ծառայությունների ձեռքբերումների համար Երեւանի քաղաքապետարանը հատկացրել է 15 մլն 939 հազար դրամ:

Համաձայն Երեւանի քաղաքապետարանի եւ Ստեփան Կույումջյան Միհրանի ԱՁ-ի հետ կնքված պայմանագրի՝ գնման առարկա է հանդիսանում Արաբկիր վարչական շրջանի տարածքի ձեւավորումը՝ Ամանորյա եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ՝

«1. Վ. Դավթյանի անվան այգու մուտքը Կոմիտասի պողոտայի կողմից կամարի տեսքով լուսավորել՝ վրան տեղադրելով տոնին համահունչ գրառում: Այգու կենտրոնական մասում 20 հատ ծառ ամբողջովին զարդարել գեղեցիկ լուսավորությամբ, որը կպարունակի տոնածառի խաղալիքներ:

2. Իրականացնել Նոր Արաբկիր զբոսայգու մուտքի գեղեցիկ զարդարում՝ կամարաձեւ լուսավորություն եւ տոնին համահունչ գրառում: Այգու կենտրոնական մասում 30 հատ ծառ ամբողջովին զարդարել, որը կպարունակի տոնածառի խաղալիքներ:

3.Քանաքեռ ՀԷԿ-ի այգու կենտրոնական հատվածը ամբողջովին լուսավորել 10 ծառ տոնածառի լույսերով, որը կպարունակի տոնածառի խաղալիքներ:

4. Կասյան-Բաղրամյան-Վազգեն առաջին Կաթողիկոս էստակադայի ամբողջ երկայնքով ամանորյա լույսերի մոնտաժում եւ ապամոնտաժում՝ կամարի տեսքով, որի համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել 20.000 մ երկարությամբ լույսեր:

5. Բաղրամյան պողոտա եւ Օրբելի եղբայրներ փողոցների հատման մասում տոնի խորհրդին համապատասխան շքեղ լուսային ձեւավորում, եւ պետք է տեղադրվի 4 մ տրամագծով գունդ՝ տոնածառի խաղալիքի տեսքով, որն ամբողջությամբ պատված լինի լույսերով:

6. Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի նստավայրի հարակից եղեւնիները պետք է ամբողջովին զարդարվեն լույսերով:

7. Ազատության պողոտայի Ազատություն - Կոմիտաս պողոտաների խաչմերուկից (Լամբադա կամուրջ) մինչեւ «Հաղթանակ» զբոսայգու մուտքի դիմացի հասարակական տրանսպորտի կանգառ, ծառերի բները 2մ բարձրությամբ պետք է զարդարվի փաթաթվող տոնածառային լույսերով»:

Շարքը կարելի էր շարունակել, սակայն հետաքրքիրն այն է, որ համաձայն պայմանագրի՝ ողջ զարդարանքի դիզայնը եւ գույների համադրությունը պետք է համաձայնեցնել Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի հետ:

Տոնական զարդարանքների ամրացման աշխատանքները սկսել է դեկտեմբերի 6-ից եւ ավարտվելու է դեկտեմբերի 13-ին:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր՝2 մլն դրամ Երեւանի քաղաքապետարանը հատկացրել էր Աջափնյակ վարչական շրջանում ամանորյա միջոցառում կազմակերպելու համար, իսկ 5 մլն դրամ էլ հատկացվել էր Նուբարաշեն վարչական շրջանում ամանորյա միջոցառում կազմակերպելու համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱԼԵՊԱՀԱՅԵՐՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Հալեպի ռազմական կառավարման պատասխանատուները երեկ հանդիպել են հայ եւ այլ քրիստոնյա համայնքապետների հետ: Այս մասին հայտնում է «Գանձասար» օրաթերթը: Հալեպահայերն անվտանգության երաշխիք են ստացել քաղաքի ռազմական կառավարիչներից: Այս մասին «Ազատությանը» հայտնել է Բերիո թեմի առաջնորդ Մակար արքեպիսկոպոս Աշգարյանը:

«Կարող ենք ասել, որ ապահովություն լինելու է, չպետք է վախենանք: Ընդհակառակը՝ պետք է հուսանք, որ մոտ ապագայում ամեն ինչ պետք է լավ լինի: Իրենք ասում են, որ լավ կլինի, որ ամեն մարդ սկսի աշխատանքին գնա, թեեւ որոշ տնտեսական դժվարություններ ունենք: Բանկերը փակ են, տակավին դպրոցները փակ են: Բայց մոտ ժամանակներս՝ հավանաբար մեկ շաբաթից, համալսարաններն ու դպրոցները կսկսեն իրենց բնականոն ընթացքի մեջ մտնել: Մաղթենք, որ բանկային դրությունն էլ կկարգավորվի», - ասաց Աշգարյանը: Ըստ արքեպիսկոպոսի՝ քաղաքում իրավիճակը խաղաղ է:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 27-ին սիրիական ընդդիմադիր զինված խմբավորումների անդամները լայնածավալ հարձակում են սկսել Հալեպ եւ Իդլիբ նահանգներում կառավարական դիրքերի դեմ: Դեկտեմբերի 7-ի երեկոյան զինված խմբավորումները գրավել են մի քանի խոշոր քաղաքներ՝ Հալեպը, Համան, Դեյր էզ Զորը, Դարաան եւ Հոմսը:

Դեկտեմբերի 8-ին հայտնի դարձավ, որ Սիրիայի զինված ընդդիմադիրները գրավել են մայրաքաղաք Դամասկոսը: Սիրիայի նախագահ Բաշար Ասադը մայրաքաղաքի անկումից ժամեր առաջ լքել էր այն: Ավելի վաղ Reuters-ը հայտնել էր, որ «մեծ հավանականությամբ» Ասադը Դամասկոսը լքելուց հետո կարող էր զոհված լինել ավիավթարից: Սակայն երկիրը լքելուց ժամեր անց հայտնի դարձավ, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադն ընտանիքի հետ Ռուսաստանի Դաշնությունում է: Այս մասին ռուսական ՏԱՍՍ գործակալությանը հայտնել է Կրեմլի անանուն աղբյուրը:

«Ասադն ընտանիքի անդամների հետ ժամանել է Մոսկվա: Ռուսաստանը, ելնելով հումանիտար նկատառումներից, նրանց ապաստան է տրամադրել»,- հայտնել է գործակալության աղբյուրը:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Հակակոռուպցիոն քրեական դատարանը հրապարակել է ԱԻ նախկին նախարար, ազգային հերոս Անդրանիկ Փիլոյանի գործով դատավճիռը: Նա մեղավոր է ճանաչվել պաշտոնական լիազորությունների չարաշահման, խոշոր չափերով կաշառք ստանալու, խոշոր չափերով խարդախության համար, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ: Փիլոյանի նկատմամբ վերջնական պատիժ է նշանակվել 4 տարի 5 ամիս՝ 5 տարվա ազատազրկմանը հաշվակցելով կալանքի ժամկետը:

Փիլոյանը 3 տարի ժամկետով զրկվեց որոշակի հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունքից, բացի այդ, նշանակվել է տուգանք՝ 1 միլիոն 300 հազար դրամի չափով: Նշենք, որ այս գործով դատավորն էր Տիգրան Դավթյանը:

ԱՊՕՐԻՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մեզ հայտնի դարձավ, որ Վիգեն Գրիգորյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատի խմբի հրամանատար Արտակ Պետիկի Բեյբությանի օժանդակությամբ, Մանվել Մաթևոսյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ վերջինիս ՀՀ ԱԻՆ ՓԾ «ՀԱԷԿ» ջոկատում աշխատանքի ընդունելու դիմաց, 2021 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Արմավիրի մարզի Արշալույս համայնքում Մանվել Մաթևոսյանի հորից՝ Միհրդատ Մաթևոսյանից, անձամբ պահանջել եւ ստացել է խոշոր չափերով՝ 819.876 ՀՀ դրամին համարժեք 1.700 ԱՄՆ դոլար գումարի տեսքով ապօրինի վարձատրություն:

Բացի այդ, դարձյալ Արտակ Պետիկի Բեյբությանի օժանդակությամբ էդգար Ծատուրյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ վերջինիս ՀՀ ԱԻՆ ՓԾ «ՀԱԷԿ» ջոկատում աշխատանքի ընդունելու հարցը լուծելու շուրջ էդգար Ծատուրյանի ազգական՝ Միհրդատ Մաթևոսյանի հետ ունեցած քննարկումների ու սակարկությունների արդյունքում, 2021 թվականի դեկտեմբերի 6-ին անձամբ պահանջել եւ Միհրդատ Մաթևոսյանից 2 չափաբաժնով՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ին Արմավիրի մարզի Արշալույս համայնքում եւ 2021 թվականի դեկտեմբերի 8-ին Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքում, ստացել է ընդհանուր խոշոր չափերով՝ 834.751 ՀՀ դրամին համարժեք 1.700 ԱՄՆ դոլար գումարի տեսքով ապօրինի վարձատրություն:

Բացի այդ, ՀՀ ՊՆ N զորամասի 4 րդ գումարտակի շտաբի պետ Տիգրան Գասպարյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ Սիսիան քաղաքում տեղակայված ՀՀ ՊՆ թիվ N զորամասից Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի որեւէ զորամաս տեղափոխելու համար 2021 թվականի ամռանը՝ քննությամբ չպարզված օրը, Էջմիածին քաղաքում Տիգրան Գասպարյանից անձամբ պահանջել եւ ստացել է խոշոր չափերով՝ 2000 ԱՄՆ դոլարին համարժեք 998.000 ՀՀ դրամ ապօրինի վարձատրություն:

Բացի այդ, Արտակ Պետիկի Բեյբությանի օժանդակությամբ, այն է՝ վերջինիցս տեղեկանալով, որ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության փրկարար ուժերի վարչության ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատի օղակի հրամանատար Գոռ Համբարձումյանի ազգական Թաթուլ Գեւորգյանն ապօրինի վարձատրության դիմաց ցանկանում է ՀՀ ԱԻՆ ՓԾ-ում աշխատանքի ընդունվել, Թաթուլ Գեւորգյանի օգտին գործողություն կատարելու, այն է՝ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում նրան աշխատանքի ընդունելու դիմաց, անձամբ պահանջել եւ 2022 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 17:45-ի սահմաններում, Էջմիածին համայնքի Ջվարթնոց թաղամասի վարչական տարածքում գտնվող գազալցակայանի հարակից հատվածում, Գոռ Համբարձումյանի ներկայությամբ Թաթուլ Գեւորգյանին պատկանող «Հյունդայի Սոնատա» մակնիշի 97 GG 100 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում նրանից ստացել է խոշոր չափերով՝ 957.560 ՀՀ դրամին համարժեք 2.000 ԱՄՆ դոլար գումարի տեսքով ապօրինի վարձատրություն:

Ք. Մ.

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽՈՒՍԱՓԵ՛Ք ԿԱՍԿԱԾԵԼԻ ՇԱՀԱՎԵՏ ԱՌԱՔԱՐԿՆԵՐԻՑ

«Ինտերնետային տարբեր կայքերում բազմաթիվ են տարատեսակ հայտարարությունները, որով քաղաքացիներին առաջարկում են կատարել ներդրում եւ ստանալ գերշահույթ:

Այդպիսի կայքերի վերաբերյալ տեղեկությունները ակտիվորեն գովազդվում են հատկապես «Ֆեյսբուք» սոցիալական կայքում եւ տելեգրամյան հարթակում:

Արդյոք պե՞տք է վստահել բոլոր այդ հայտարարություններին: Իհարկե՝ ո՛չ:

Այդպիսի կայքերում լրացնելով ձեր հեռախոսահամարը, ձեզ հետ բավականին արագ հայկական կամ արտասահմանյան հեռախոսահամարով կապ կհաստատեն զեղծարարների զանգերի կենտրոնից, կառաջարկեն գումարային ներդրում կատարել կրիպտոարժույթի կամ այլ ոլորտում, կվստահեցնեն, որ իրենք ձեզ համար կապահովեն գերշահույթ:

Մի՛ շտապեք կատարել ներդրումներ, ստացե՛ք խորհրդատվություն՝ զանգահարելով 011 52 52 52՝ ՆԳՆ ինտերնետային խարդախություններով թեժ գծի հեռախոսահամարին (թեժ գիծը գործելու է աշխատանքային օրերին՝ ժամը 09:00-ից 18:00-ն): Պարզապես հիշե՛ք՝ տրվելով գրավիչ առաջարկություններին մեծ է հավանակությունը, որ կկրեք գումարային մեծ կորուստներ»:

ԴԱՏԱԿԱՆ

Գրիգոր Ռոլանդի Մկրտչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ Արմավիրի մարզի նախկին Նալբանդյան համայնքի ղեկավար, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն, պարտավոր լինելով օրենքով սահմանված կարգով կազմակերպել տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային եւ պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը, 2018 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Նալբանդյան համայնքի բնակիչներից հողի հարկի, անշարժ գույքի հարկի եւ փոխադրամիջոցի գույքահարկի վճարումներով հավաքագրի ընդհանուր՝ 96.980.702 ՀՀ դրամ գումարը Նալբանդյան համայնքի գանձապետական հաշվին մուտքագրելու փոխարեն՝ նշված գումարից Նալբանդյան համայնքի գանձապետական հաշվին է վճարել 50.987.685 ՀՀ դրամ, իսկ մնացած առանձնապես խոշոր չափերով՝ 45.993.017 ՀՀ դրամը, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, յուրացման եղանակով հափշտակել է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

14-ամյա երեխային ինքնասպանության հասցնելու հատկանիշներով քրեական վարույթ է նախաձեռնվել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել է ՀՀ ՔԿ խոսնակ Գոռ Աբրահամյանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ դեկտեմբերի 4-ին Ալավերդու հիվանդանոցից «Արաբկիր» հիվանդանոց է տեղափոխվել 14-ամյա անչափահաս Ա. Ս.-ն:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ թեեւ բժիշկները ամեն կերպ պայքարել են երեխայի կյանքը փրկելու համար, սակայն դեկտեմբերի 8-ին 14 տարեկան տղան մահացել է:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ տղան ունեցել է «Երեւանյան» հիվանդություն, տանը խմել է տարբեր տեսակի 25 դեղահաբ, եւ բժիշկների եզրակացությամբ նրա մոտ կոլիխիցինայի թունավորում է եղել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ԼՈՒՐԵՐ

ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆԸ՝ ԱՌԱՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Սրբուհի Գալյանը պետքարտուղարության 2024թ. կոռուպցիայի դեմ պայքարի առաջամարտիկների շարքում է: Այս մասին հայտնում են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունից:

«Շնորհավորում ենք Սրբուհի Գալյանին, որը պետքարտուղարության 2024թ. կոռուպցիայի դեմ պայքարի առաջամարտիկների շարքում է: ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի եւ իրավապահ համագործակցության բյուրոն Սրբուհի Գալյանին ճանաչում է որպես կոռուպցիայի դեմ պայքարի առաջամարտիկ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը որպես կոռուպցիայի դեմ պայքարի կարեւորագույն գործիք կիրառելու համար»,-նշված է հաղորդագրության մեջ:

ԳՈՂՈՆԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Համայնքային ոստիկանության Թումանյանի բաժնում դեկտեմբերի 6-ին հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ դեկտեմբերի 4-ին Ալավերդի քաղաքի Երիտասարդական փողոցի ավտոլվացման կետի մոտից գողացել են մայթեզրին կայանված իր կվադրոցիկլը: Ստացված տեղեկություններն իրացնելու եւ համապատասխան միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել է Ալավերդի քաղաքի 43-ամյա բնակիչը եւ ՍՊ ընկերություններից մեկի երկու աշխատակցի հետ, ընկերության «ԳԱԶել»-ով, տեղափոխել Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող իր ավտոտնակ:

Հետագա միջոցառումների արդյունքում 43-ամյա տղամարդը հայտնաբերվել եւ գողացած կվադրոցիկլով հանդերձ ներկայացվել է Համայնքային ոստիկանության Թումանյանի բաժին, որտեղ խոստովանել է արարքը:

ՁԿՆԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Սիգի ձվադրման ժամանակաշրջանով պայմանավորված՝ նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում ՇՄՆ էկոպարեկային ծառայության, Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի, Ոստիկանության աշխատակիցների համատեղ շուրջօրյա ուժեղացված ստուգայցերի ընթացքում Սեւանա լճում, հարակից բնակավայրերում, Երեւան քաղաքի, ՀՀ մարզերի ավտոճանապարհներին, շուկաներում եւ բացօթյա վաճառակետերում հայտնաբերվել եւ առգրավվել է.

257կգ ձուկ
6 ապօրինի վաճառք
3 ապօրինի տեղափոխում
3 ձկնագողություն
6 լողամիջոց
4 ձկնորսական ցանց

Հարուցվել է 7 վարչական եւ 4 քրեական վարույթ:

Շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը 1.104.500 դրամ է կազմում:

Առգրավված ձկները համապատասխան փորձաքննությունից հետո հանձնվել են հատուկ խնամքի կենտրոններ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 9-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 124 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՊՕՐԻՆԻ ՍԱՐՔՎԱԾ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏ

Նիկոլ Փաշինյանը վերջերս պատմում էր, որ համայնքներից մեկում, երբ ինքը քայլում էր, ավտոլվացման կետից քիչ էր մնում ջուր ցողեին իր վրա: Թեեւ նա չնշեց, սակայն խոսքը իր հայրենի Իջեւան քաղաքի մասին էր: Երեւանից հեծանիվով Իջեւան գնացած Նիկոլ Փաշինյանը միջպետական ավտոճանապարհի եզրին, Հաղարծին գյուղի հարվային ծայրին չի՞ տեսել անօրինական կառուցված ավտոլվացման կետը, որը պատկանում է 2021թ. փետրվարի 26-ին իր կողմից Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված Դավիթ Սարգսյանի ընտանիքին: 2017թ.-ին Դավիթ Սարգսյանի եւ իր եղբայր Սասունի կողմից Հաղարծին գյուղում, միջպետական ավտոճանապարհի եզրին, առանց շինթույլտվության, ավտոլվացման կետ է կառուցվել, որն այժմ էլ գործարկվում է: 2019թ. օգոստոսին Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանը նրանց գրավոր զգուշացրել է, որ կառույցը Դիլիջան համայնքի ղեկավարի համապատասխան ակտի հիման վրա տեղադրվել է որպես ժամանակավոր ծածկ՝ առաջին իսկ անհրաժեշտության դեպքում ապամոնտաժելու պայմանով՝ ելնելով համայնքի գերակա շահերից: Համայնքի ղեկավարի կողմից որոշում է կայացվել ինքնակամ կառույց իրականացնող անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին. նա տուգանվել է 400 հազար դրամի չափով: Ապօրինի սարքված ավտոլվացման կետն անցած 7 տարում անխափան գործել է՝ հարստացնելով Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի ընտանիքը:

ՉԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ

Մայիսի 27-ի ջրհեղեղից, վարարած Աղստեւ գետի հոսանքից վնասվեցին միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածի շատ տեղեր: Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ դեկտեմբերի 8-ին ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանն այցելել է Տավուշի մարզ. Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի եւ համայնքապետերի հետ նախարարը նախ եղել է մայիսյան ջրհեղեղի հետեւանքով վնասված ճանապարհահատվածներում: Տեղում քննարկվել են գետի հունի մաքրման աշխատանքների ընթացքը, այցելել են ջրհեղեղի հետեւանքով լրջորեն վնասված Խաշթառակի կամուրջ: Այժմ շահագործվում է ժամանակավոր կամուրջը, քննարկել են հիմնական կամրջի նորոգման հարցը:

Բնական աղետից վեցուկես ամիս անց Աղստեւի ափամերձ, միջպետական ավտոճանապարհի եզրի քանդված տեղերը չեն վերականգնվել: Այժմ աշխատանքներ են կատարվում միայն Դիլիջան քաղաքի հյուսիսային ծայրին՝ «Գետափ» ռեստորանի մոտ ճանապարհի քանդված եզրը նորոգելու համար: Նորոգման աշխատանքների պատճառով այդտեղ երթեւեկը մոտ 20 օր միակողմանի է: Հայտնի չէ, թե նորոգման աշխատանքերը երբ կավարտվեն: Միջպետական ճանապարհի մյուս հատվածներում՝ Հաղարծին գյուղի դպրոցի դիմաց, Թեղուտ գյուղի տարածքում եւ այլ տեղեր, ճանապարհի քանդված եզրերը նորոգելու աշխատանքներ չեն կատարվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԸ ՏՈՆԵԼ Է 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Դեկտեմբերի 8-ին լրացավ «Արմեն Մազմանյանի անվան բեմարվեստի ազգային փորձարարական «Գոյ» կենտրոն պետական ոչ առեւտրային կազմակերպության» 36-րդ տարեդարձը: «Գոյ» թատրոնի փակ դռների դիմաց բեմադրվեց նաեւ ներկայացում եւ այդ օրը նաեւ հայտարարվեց 1 ամիս տեւած բողոքի նստացույցի ավարտի մասին:

Թեպետ 1 ամիս տեւած բողոքի նստացույցն ավարտվեց, այս հանգամանքն ամենեւին էլ չի նշանակում, որ պայքարը հանուն թատրոնի չի շարունակվելու. հակառակը՝ ամեն բան նոր փուլ է մտնում, եւ սպասվում են այլ ակցիաներ:

Հիշեցնենք, որ դեռեւս 2023 թվականի մարտի 22-ին տարածվեցին լուրերը «Գոյ» թատրոնի փակվելու վերաբերյալ: Թատրոնի գեղարվեստական ղեկավար, ռեժիսոր Արթուր Սահակյանը դեռ այդ ժամանակվանից էլ նշել է, որ պատճառ կարող է հանդիսանալ իր քննադատությունը իշխանությունների հասցեին: Անգամ թատրոնի խաղացանկում եղել են քաղաքական կոնտեքստով ներկայացումներ, քննադատություններ: Դրանց վառ օրինակն են Ջորջ Օրուելի «Անասնաֆերման», Ալբեր Կամյուի «Օտարը», «Գարեգին Նժդեհ. իրական առասպել» պատմական հետազոտությունը եւ այլ ներկայացումներ: Սակայն հարկ է նշել, որ թե՛ ներկայացումները, թե՛ բուն ստեղծագործությունները մեծ սեր եւ հարգանք են վայելում:

«Ժողովուրդ» օրաթերթը այս թեմայի շուրջ զրուցել է «Գոյ» թատրոնի կառավարման խորհրդի նախագահ, ռեժիսոր Սարգիս Արզումանյանի հետ:

-Պարոն Արզումանյան, թատրոնի ծննդյան օրը հայտնել եք, որ նստացույցը դադարեցվել է եւ փոփոխություն ու զարգացումներ են սպասվում: Ավելի հստակ՝ ինչի՞ մասին է խոսքը:

-Նստացույցը դադարեցնելը փոքր-ինչ լավ չի հնչում, որովհետեւ տագնապային է թվում: Պարզապես այդ բողոքի ակցիան փոխարինում ենք այլ ակցիաներով, որովհետեւ մեր ուժերը 1 ամիս շարունակ կենտրոնացրել էինք նստացույցի վրա, ինչը տվեց այն արդյունքը, ինչը տվեց: Հիմա, քանի որ մեր հարգարժան ԿԳՄՍ նախարարությունը հաշվի չի նստում մեր պահանջի հետ, այժմ պետք են գործողություններ, որ կարողանանք հասնել արդյունքի: Ի՞նչ է դա իրենից ենթադրում՝ ենթադրում է հանրային ճնշում, իսկ հանրությանը բերել ու կենտրոնացնել մի գաղափարի շուրջ, դա աշխատատար գործընթաց է, ու նստացույցը միայն արդյունավետ չէր դա կյանքի կոչելու համար: Դրա համար այժմ մենք ունենք գործողությունների հստակ պլան, որոնցով պետք է փորձենք հանրությանը բերել այս դաշտ, որովհետեւ սա միայն մեր կռիվը չէ, «Գոյ» թատրոնում աշխատելու կռիվ չէ, սա խոսք է մշակույթի մասին, իսկ մշակույթը բոլորինն է: Դրա համար պետք է մարդկանց իրազեկենք, ապացուցենք այս պայքարի արդարացիությունը եւ փորձենք հանրային ճնշումով ստիպել բացել «Գոյ» թատրոնի դռները, մինչեւ աշխատենք, հասկանանք՝ դատարանն ինչ է որոշում: Քայլերից մի քանիսն ասեմ. հաճախակի լինելու են հանրային միջոցառումներ, որոնք կներառեն դասախոսություններ, ներկայացումներ: Ներկայացում ասվածը ավանդական խաղերը չեն, ինչը գիտենք: Սրանք իրենց բովանդակությամբ բողոքի ներկայացումներ են լինելու: Չպետք է թվա, որ մենք հարմարվում ենք՝ նույնիսկ փողոցում խաղալու համար: Սրանք ասելիքով ներկայացումներ են, հրապարակային տխուր ներկայացումներ: Կունենանք մասնավոր հանդիպումներ: Արդեն մենք կայցելենք մեր գործընկերներին, կգնանք այլ թատրոններ, կհանդիպենք անկախ արվեստագետների: Կփորձենք բացատրել, պարզաբանել, որպեսզի մարդիկ հասկանան՝ ինչ է ընդհանրապես տեղի ունենում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԵՎ ՈՒՐԲԱԹԻՆ ՌԵԿՈՐԴ Է ՍԱՀՄԱՆՎԵԼ

ԱՄՆ-ում Սեւ ուրբաթին որպեռում 11,3 մլն դոլարի առցանց առեւտուր է իրականացվել: Ընդհանուր առմամբ օնլայն առեւտրի միջոցով ԱՄՆ-ում ծախսվել է 10,8 մլրդ դոլար:

Հայաստանում Սեւ ուրբաթին՝ նոյեմբերի 29-ին, համաձայն ՊԵԿ-ի, իրականացվել է 11 մլրդ 26 մլն դրամի առեւտուր: Տպվել է 2 մլն 34 հազար 651 հատ ՀԴՄ կտրոն: 2023 թվականի Սեւ ուրբաթի տվյալների համեմատ՝ ծախսված գումարը ավելացել է 4,7%-ով:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ առավել ակտիվորեն գնումներ կատարվել են բջջային սարքերով, ինչը կազմել է բոլոր առցանց գնումների 69%-ը: Այս տարի առցանց վաճառքներն աճել են մոտ 14.6%-ով նախորդ տարվա համեմատ՝ հաշվի առնելով գնորդների ակտիվությունը ոչ միայն մեկ օրվա ընթացքում, այլեւ Սեւ ուրբաթ հատուկ առաջարկների ամբողջ շաբաթվա ընթացքում:

Խանութների այցելությունների քանակը նվազել է 8.2%-ով, սակայն մեծ զեղչերի դեպքում որոշ խանութներում նկատվել են

ավելի շատ այցելություններ: Զեղչերը հիմնականում տատանվել են 40%-ից 70%-ի սահմաններում: Միեւնույն ժամանակ, հաճախորդները բախվել են առցանց խարդախության դեպքերի, որոնցից խուսափելու համար կարեւոր է զգույշ լինել կասկածելի կայքերից գնումներ անելիս:

Այսպիսով՝ Սեւ ուրբաթը ոչ միայն վաճառքի բարձրացման, այլեւ սպառողների ուշադրության կենտրոնում է՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄ

Տավուշի մարզի 3 գյուղ՝ Կիրանցը, Աճարկուտն ու Բերքաբերն ամբողջությամբ գազիֆիկացվել են: Աշխատանքներն իրականացվել են սուբվենցիոն ծրագրի արդյունքում: Համայնքի ներդրման մասնաբաժինը՝ ընդհանուր բյուջեի 35 տոկոսը, որը կազմում է մոտ 82 մլն դրամ, տրամադրել է բարերար Միքայել Վարդանյանը: Իսկ Բարեկամավանում ծրագիրն ամբողջությամբ իրականացվել է Միքայել Վարդանյանի ֆինանսավորմամբ՝ հատկացվել է մոտ 18 մլն դրամ: Գազիֆիկացման արդյունքում մարզի նշված 4 բնակավայրերում կլուծվի միանգամից մի քանի խնդիր:

Բնակիչների սոցիալական եւ կենցաղային վիճակը կբարելավվի, անտառահատումների քանակը կնվազի:

Բարերարը եւս 20 մլն դրամ տրամադրել է Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր, Արծվաբերդ, Նորաշեն բնակավայրերի խմելու ջրի արտաքին ցանցի կապիտալ նորոգմանն աջակցելու նպատակով: Երկու ծրագրի իրականացման համար Միքայել Վարդանյանը ընդհանուր տրամադրել է 120 մլն դրամ: Ի դեպ, բարերարի ֆինանսական աջակցության շնորհիվ 2006 թվականից մինչեւ օրս Տավուշի մարզում գազով ապահովվել է 28, իսկ խմելու ջրով 42՝ գյուղական համայնք:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 21 պատահար. 26 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԻՋԵՑՎԵԼ Է

Դեկտեմբերի 10-ին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել է՝

իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 7.00 %,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 8.50 %,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.50 %:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ. ՎԵՐԱԲԲԵՆԴԱՎՈՐՈՒՄ

«Ֆասթ» բանկը վերաբրենդավորել է Հրազդան քաղաքում գործող մասնաճյուղը: Հրազդան քաղաքի «Ֆասթ» բանկի երկհարկանի մասնաճյուղը համալրվել է ժամանակակից տեխնոլոգիաներով, ստեղծվել են անհրաժեշտ բոլոր պայմանները հաճախորդների սպասարկումը դյուրին եւ արագ կազմակերպելու համար: «Ֆասթ» բանկի հաճախորդներն այստեղ կարող են կատարել միջազգային փոխանցումներ, օգտվել վարկատեսակներից, ներդնել ավանդ, ձեռք բերել պարտատոմսեր, կատարել վճարումներ, տարադրամի փոխարկում եւ այլն:

«Ֆասթ» բանկի «Հրազդան» մասնաճյուղի կառավարիչ Ռոբերտ Բադալյանն ասել է. «Տարին ամփոփում ենք դրական փոփոխություններով եւ մեր մասնաճյուղի հաճախորդների համար լավ լուրերով: Հրազդան մասնաճյուղը վերաբրենդավորվել է եւ այսուհետեւ հաճախորդներին սպասարկելու է ավելի հարմարավետ միջավայրում: Արագ եւ որակյալ սպասարկում ապահովելու համար մասնաճյուղը հագեցած է անհրաժեշտ բոլոր միջոցներով, եւ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա՝ աշխատելու ենք 24/7 գրաֆիկով»:

Հրազդան մասնաճյուղի վերաբրենդավորումը նպատակ ունի մարզում շեշտադրել «Ֆասթ» բանկի ներկայությունը՝ հաճախորդներին առաջարկելով նոր որակի սպասարկում: Բանկը վերջին ամիսներին ակտիվորեն իրականացնում է ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ մարզային մասնաճյուղերի վերաբրենդավորման աշխատանքներ՝ նպատակ ունենալով բոլոր մասնաճյուղերում ապահովել հարմարավետ, բարձր որակի սպասարկում՝ հընթացս նաեւ մեծացնելով ծառայությունների շրջանակը:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

100% by Telcell

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ՊՐՈԴՈՒԿՏ Է ՆԵՐԴՐՎԵԼ

Նոր բաժնետոմսեր թողարկած եւ հրապարակային առաջարկով (IPO) ներկայացած, հանրային բաց գործունեություն ծավալող «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը, նպատակ ունենալով նոր նախագծերով մշտապես ընդլայնել մատուցվող ծառայությունների սահմանները, մասնակցություն է ունեցել 100% by Telcell պրոդուկտի գործարկմանը:

Երեւանում եւ հարակից բնակավայրերում տեղադրվել են արտաքին մարտկոցների (Power bank) կայաններ, որոնք մարդկանց հնարավորություն կտան միշտ լիցքավորված պահել տարբեր սարքավորումներ:

Մարտկոցները (Fast charger) կարող են կարճ ժամանակում 100%-ով լիցքավորել այնպիսի սարքավորումներ, ինչպիսիք են՝ հեռախոսը, ականջակալը, սմարթ ժամացույցը, պլանշետը: Մարտկոցը կարելի է վերցնել մոտակա կայանից եւ վերադարձնել ցանկացած այլ կայան, իսկ օգտվել հնարավոր է Telcell Wallet-ի միջոցով, եւ այլ հավելվածի կարիք չկա:

Արտաքին մարտկոցներն անլար են, չեն սահմանափակում տեղաշարժը, ունեն 3 տարբեր լիցքավորիչ լարեր՝ USB Type C, USB Micro C եւ Lightning connector (Apple):

Մարտկոցներից օգտվելու ձեւը շատ պարզ է.

- անհրաժեշտ է ուղղակի սքանավորել կայանի QR կոդը,
- հաստատել վճարումը,
- վերցնել մարտկոցը,
- լիցքավորել 100%-ով,
- վերադարձնել 100% by Telcell-ի ցանկացած կայան:

Նոր ծառայությամբ ընկերությունն ընդլայնված հնարավորություններ է ստեղծում իր օգտատերերի համար: Կայանների տեղակայմանը կարելի է ծանոթանալ Telcell Wallet-ի անձնական էջի համապատասխան բաժնի քարտեզում:

Նոր պրոդուկտի թողարկումն աճի տեմպ կհաղորդի ընկերությանը, իսկ ապագայում նաեւ կխթանի ընդհանուր շահույթի աճը՝ որպես բիզնեսի նոր ուղղություն:

Telcell վճարահաշվարկային ընկերությունը հիմնադրվել է 2007թ. Հայաստանում՝ որպես առաջին վճարային տերմինալային ծառայություններ մատուցող ընկերություն: Ներկայում այն ունի տերմինալային ամենամեծ ցանցը եւ Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը կարողացել է պահպանել առաջատար դիրքերը խիստ մրցակցային դարձած շուկայում եւ դիվերսիֆիկացրել պորտֆելը մի շարք ռազմավարական ուղղություններով՝ ստեղծելով էկոհամակարգային բիզնես:

Վերջին 7 տարիների ընթացքում Telcell-ը գրանցել է տարեկան միջինը 37% շահույթի աճ:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերությունը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Գ. Միքայելյան փողոց, 72 շենք, 45 հասցեում գտնվող 83,7 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27500000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 27.12.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 27.01.2025թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Արարատի մարզ, համայնք Արգավանդ, Կենտրոնական փողոց, 24 հասցեում գտնվող 160,56 ք.մ. բնակելի տուն, 46,95 քմ դալան, 140,59 քմ ավտոտնակ եւ 0,104169 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14250000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 27.12.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 27.01.2025թ.- ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ - ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԵՆԵՐԳԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ՀԱՅՏՆԻ ԵՆ, ԹԵ ՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի երաժշտական ընկերությունը դեկտեմբերի 2-9-ն անցկացրել է Գոհար Գասպարյանի անվան մենեւրգիչների (դասական երգեցողություն) համահայկական մրցույթը:

Մրցույթն այս տարի նվիրված էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Գոհար Գասպարյանի ծննդյան 100-ամյակին:

«Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի են ունեցել մրցույթի գալա համերգը եւ մրցանակների հանձնման արարողությունը:

Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Ողջունելով մրցույթի մասնակիցներին, ժյուրիի անդամներին եւ հյուրերին՝ նա կարեւորել է միջազգային մակարդակով Գոհար Գասպարյանի հոբելյանին նվիրված այս ստուգատեսի անցկացումը:

«Գոհար Գասպարյանն անգնահատելի ավանդ ու ներդրում ունի հայ կատարողական արվեստի զարգացման, տարածման եւ հանրահռչակման գործում, եւ պատահական չէ, որ այս մրցույթը կրում է նրա անունը: Գոհար Գասպարյանը՝ որպես մշակույթի դեսպան, իր հետաքրքիր դերերգերով եւ կատարողական անգերազանցելի բարձր վարպետությամբ հանրահռչակել է հայ օպերային արվեստն ամբողջ աշխարհում: Անգնահատելի է նաեւ Գոհար Գասպարյանի դերը որպես մանկավարժ. նա իր սաներին փոխանցել է այնպիսի գիտելիքներ եւ կատարողական արվեստի նրբերանգներ, որոնց շնորհիվ նրանք հանդես են եկել աշխարհի լավագույն բեմերում»,- նշել է Դանիել Դանիելյանը եւ բարի երթ ու մասնագիտական վերելքներ մաղթել մրցույթի բոլոր մասնակիցներին:

Դեկտեմբերի 9-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցած մրցանակաբաշխության ժամանակ ժյուրիի կողմից մրցանակների են արժանացել հետեւյալ մասնակիցները՝

Սիմոնյան Սոֆիա՝ 2-րդ մրցանակ
Մելքոնյան Վիկտորիա՝ 2-րդ մրցանակ
Միսակյան Մերի՝ 3-րդ մրցանակ
Օրդանյան Հովհաննես՝ 2-րդ մրցանակ
Փոդրատչյան Հայկ՝ 3-րդ մրցանակ
Մկրտչյան Արթուր՝ 3-րդ մրցանակ
Մարիամ Գրիգորյան՝ Կոմիտասի լավագույն կատարման համար մրցանակ

Հիշեցնենք, որ նոյեմբերի 29-ին Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակուստիկ դահլիճում տեղի է ունեցել մրցույթի վիճակահանությունը: Մրցույթի մասնակցության հայտ էր ներկայացրել 43 մասնակից: Առաջին փուլը կայացել է դեկտեմբերի 2-4-ը Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցի մեծ դահլիճում: Երկրորդ փուլն անցկացվել է դեկտեմբերի 6-7-ին, որն ունեցել է 21 մասնակից: Դեկտեմբերի 8-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի է ունեցել 3-րդ փուլ անցած 11 մասնակիցների ելույթը:

ՀՀ ԿԳՄՍՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՄՈՆՈՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»



«Արմմոնո Plus» միջազգային 8-րդ թատերական փառատոնի շրջանակում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ներկա են եղել Արմեն Քուշկյանի «Սասունցի Դավիթ» մոնոներկայացմանը: Բեմադրությունը՝ ՀՀ վաստակավոր արտիստ Նարինե Գրիգորյանի:

«Արմմոնո Plus» թատերական փառատոնն «Արմմոնո» միջազգային թատերական փառատոնի հավելվածն է: Այն մի հարթակ է, որտեղ երիտասարդ թատերական գործիչները կարող են ներկայացնել իրենց աշխատանքները: Լավագույն մոնոներկայացումները կցուցադրվեն նաեւ «Արմմոնո» միջազգային թատերական փառատոնի հիմնական փուլում, որը կկայանա 2025 թվականին: Փառատոնի շրջանակում ցուցադրվել է շուրջ 15 մոնոներկայացում-առաջնախաղ:

Միջազգային ծրագրում ներառված են եղել Ելենա Կալագանովայի (ՌԴ) «Երջանիկ Շառլոտան» եւ Ջորջի Դվալիշվիլու (Վրաստան) «Մեկ ուրիշը» մոնոներկայացումները:

ԿԱՌԼ ՋԵՆՔԻՆՍԻ ՀԱՆՐԱՀԱՅՏ «ՍԻՄՖՈՆԻԿ ԱԴԻԵՄՈՒՍ»-Ը

Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային փառատոնի շրջանակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի կատարմամբ եւ դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ հնչեց Սըր Կառլ Ջենքինսի հանրահայտ «Սիմֆոնիկ Ադիեմուս» ստեղծագործությունը:

Սըր Կառլ Ջենքինսը մեր օրերի անվանի կոմպոզիտորներից է, ում ստեղծագործություններն ամենաշատն են կատարվում: Նրա ամենահայտնի գործերից են «Պալլադիոն» (1995), «Ջինված մարդը» մեսսան (2000), «Ռեքվիեմը» (2005), «Ստաբատ Մատերը» (2008):

«Սիմֆոնիկ Ադիեմուսի» ձայնասկավառակն արժանացել է 17 ոսկե եւ 2 պլատինե մրցանակների, վաճառվել է 1 միլիոն օրինակով թողարկման առաջին իսկ տարում ու կատարվել 1000-ից ավելի անգամ ամբողջ աշխարհում: Այն դասական, էթնիկ եւ ջազային երաժշտության գրավիչ միաձուլում է:

Ստեղծագործության երաժշտությունը ներկաներին է փոխանցում աֆրիկյան, ասիական եւ կելտական մշակույթների տրամադրություն:

Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային փառատոնը կազմակերպվել է «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Երեւանի քաղաքապետարանի հովանավորությամբ:

Փառատոնի հաջորդ համերգը տեղի կունենա վաղը՝ դեկտեմբերի 10-ին: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենա ջութակահար Կլարա-Ջումի Կանգը:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԵՎՐՈ-2026-ԻՆ

Ֆուտզալի Հայաստանի ազգային հավաքականը դեկտեմբերի այս օրերին մարզական հավաք է անցկացնում ՀՖՖ ֆուտբոլի ակադեմիայում՝ պատրաստվելով ՈՒԵՖԱ-ի Եվրո-2026-ի որակավորման հիմնական փուլի առաջին եւ երկրորդ տուրերի խաղերին:

Հայաստանի հավաքականը դեկտեմբերի 14-ին Երեւանում կընդունի Դանիայի ազգային թիմին, իսկ չորս օր անց հյուրընկալվի Ղազախստանին:

Եվրո-2026-ի որակավորման հիմնական փուլում Հայաստանի հավաքականը ընդգրկվել է 6-րդ խմբում, որտեղ կմրցի նաեւ Ալբանիայի թիմի դեմ:

Ընտրական բոլոր խմբերում առաջին տեղը գրաված 10 հավաքականները կնվաճեն Եվրո-2026-ի ուղեգիր: Եվս չորս ուղեգրեր փլեյ-օֆֆում կվիճարկեն խմբերում երկրորդ տեղը գրաված հավաքականները:

ԳՈՌ ՍԱՀԱԿՅԱՆՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 8-ՐԴՆ Է

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականի առաջին ներկայացուցիչը մեկնարկեց աշխարհի առաջնությունում:

Բահրեյնում ծանրամարտի աշխարհի 2024 թվականի առաջնությունում պայքարի մեջ մտան 73 կգ քաշային ծանրորդները: Հայաստանի հավաքականի անդամ Գոռ Սահակյանը հանդես եկավ իր համար նոր այս քաշային կարգում:

Պոկում վարժության ժամանակ Գոռ Սահակյանը մեկ հաջող մոտեցմամբ բարձրացրեց 146 կգ: Հրում վարժությունում նա բարձրացրեց միայն 185 կգ: Երկամարտի 331 կգ արդյունքով Գոռ Սահակյանն աշխարհի առաջնությունում 8-րդն է:

ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ «Կրասնոդար»-ի ավագ էդուարդ Սպերցյանն ընդգրկվել է ռուսական Պրեմիեր լիգայի առաջին հատվածի 10 լավագույն ֆուտբոլիստների շարքում:

Opta-ն կազմել է Պրեմիեր լիգայի լավագույնների 10-յակը, որտեղ ընդգրկվել են Էսեկիել Բարկոն («Սպարտակ»), Մանֆրեդ Ուգալդեն, Մաքսիմ Օսիպենկոն, Ալեքսեյ Բատրակովը («Լոկոմոտիվ»), Դուգլաս Սանթոսը («Զենիթ»), Կլաուդինյոն («Զենիթ»), Իվան Օբլյակովը (ԲԿՄԱ), Էդուարդ Սպերցյանը («Կրասնոդար»), Իգոր Դիվեեւը (ԲԿՄԱ), Ստեֆան Լոնչարը («Ակրոն»):

Ռուսաստանի ֆուտբոլի առաջնության աշնանային հատվածից հետո «Կրասնոդար»-ը եւ «Զենիթ»-ն ունեն հավասար՝ 39-ական միավոր: Մրցաշրջանի երկրորդ հատվածը կմեկնարկի 2025 թվականի մարտին:

● *Դեկտեմբերի 23-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվ. պետական դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Ընկույզկոտրուկի գաղտնիքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ Երեւանում գրանցված կազմակերպությունը երրորդ երկրից ապրանքներ ներմուծելիս մաքսային ձեւակերպումները կարող է արդյոք իրականացնել Սիսիանում:

Կարո Հարությունյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հուլիսի 4-ի N03/42-Ն հրամանի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային ձեւակերպումների իրականացման վայրեր են այն տարածաշրջանային մաքսատները, որոնց գործունեության գոտին ընդգրկում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 865-Ն որոշման 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատան գործունեության տարածք է հանդիսանում Երեւանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները, ուստի Երեւանում գրանցված կազմակերպության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ձեւակերպումների իրականացման վայր է համարվում Արարարատյան տարածաշրջանային մաքսատունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բացթողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ մինչեւ երկու տարին չգերազանցող ժամկետով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Մարգարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Շողակաթ Վարդանյանի «1489» վավերագրական ֆիլմը հաղթող է ճանաչվել Հռոմի վավերական ֆիլմերի միջազգային փառատոնում:

«Սա հատկապես պատիվ է, քանի որ ժյուրիի նախագահը Սերգեյ Լոզնիցան է: Իսկապես մեծ պատիվ է, եւ սա մեծ պատասխանատվություն է», - գրել է Վարդանյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9	-1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8	-1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5	+3 + 5
Գեղարքունիք	-7 - 11	- 2 + 1
Լոռի	- 4 - 8	+1 + 4
Տավուշ	0 - 4	+3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9	0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4	+ 4 + 7

Արարատ	0 - 4	+6 + 8
Արմավիր	-1 - 5	+ 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10	0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2	+12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3	+ 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8	- 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7	0 + 6
Երեւան	0 - 2	+ 2 + 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*